ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԱՆՑ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ, ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ, «ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՄԱՍԻՆ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ, «ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԱՆՑ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ, ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

1. Իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը

Նախագծերի փաթեթի նպատակը դատավորների կենսաթոշակի իրավունքի պայմանների համապատասխանեցումն է Սահմանադրական դատարանի 18.06.2019թ. ՍԴՈ-1463 որոշմանը, ինչպես նաև դատախազների և քննչական մարմիններում ինքնավար պաշտոն զբաղեցրած անձանց կենսաթոշակային ապահովության միասնական պայմանների սահմանումն է:

1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

Ներկայում դատավորների կենսաթոշակային ապահովությունը կարգավորվում է «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» օրենքով:

Մասնավորապես, օրենքի 2-րդ հոդվածով սահմանված է դատավորի կենսաթոշակի իրավունքը, իսկ Օրենքի 9-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված է առանձնահատկություն այն դատավորների համար, ովքեր «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» օրենքն ուժի մեջ մտնելու օրվա (01.07.2014թ.) դրությամբ առնվազն 10 տարի

պաշտոնավարել են դատավորի պաշտոնում. այս դեպքում կենսաթոշակը հաշվարկվում է աշխատավարձից:

Սահմանադրական դատարանի 18.06.2019թ. ՍԴՈ-1463 որոշմամբ ուժը կորցրած են ճանաչվել Օրենքի 9-րդ հոդվածի 6-րդ մասի առաջին պարբերությունը, այդ պարբերության հետ համակարգային առումով փոխկապակցված՝

1) նույն հոդվածի 6-րդ մասի երկրորդ պարբերությունը՝ «մինչև 2014 թվականի հուլիսի 1-ը գործող օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկված աշխատավարձի (պաշտոնային դրույքաչափի և դրա նկատմամբ սահմանված հավելավճարի հանրագումարի) գումարի և զրո ամբողջ ինը տասնորդական գործակցի արտադրյալի 55 տոկոսի չափով» դրույթի մասով,

2) նույն հոդվածի 6-րդ մասի երրորդ պարբերության երկրորդ նախադասությամբ ամրագրված դրույթները,

3) նույն օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասը (վերաբերում է մասնագիտական ստաժում մինչև 2014 թվականի հունվարի 1-ն ընկած ժամանակահատվածները հաշվառելուն),

4) նույն հոդվածի 6-րդ մասի չորրորդ պարբերությամբ նախատեսված իրավակարգավորումը (վերաբերում է այդ մասում նշված աշխատավարձը հաշվարկելու կարգը Կառավարության կողմից սահմանելուն), ինչպես նաև նույն օրենքի 5-րդ հոդվածի 4-րդ մասը (վերաբերում է հիմնական կենսաթոշակի չափը և մասնագիտական ստաժի մեկ տարվա արժեքը Կառավարության կողմից սահմանելուն)՝ դատավորներին վերաբերող մասով:

Սահմանադրությանը հակասող ճանաչված դրույթների ուժը կորցնելու վերջնաժամկետ սահմանվել է 2019 թվականի հոկտեմբերի 30-ը:

Ընդ որում, Սահմանադրական դատարանը, որոշման հիմքում դրել է Դատավորների անկախության և դրան համապատասխան իրավական կարգավիճակի առանձնահատկությունները կարևորող մի շարք միջազգային իրավական փաստաթղթեր:

Մասնավորապես, այդ իրավական փաստաթղթերի համաձայն՝

- դատավորների անկախությանը համապատասխան վարձատրությունը, ծառայության պայմանները, թոշակը և թոշակի գնալու տարիքը պետք է պատշաճ ձևով երաշխավորվեն օրենքով (Միավորված ազգերի կազմակերպության՝

հանցագործությունների կանխմանը և իրավախախտների հետ վարվելակերպի հիմնախնդիրներին նվիրված յոթերորդ կոնգրեսի կողմից 1985 թվականին ընդունված՝ Դատական մարմինների անկախության հիմնարար սկզբունքներ, 11-րդ կետ),

- օրենքով նախատեսված տարիքին հասնելուց հետո թոշակի անցած դատավորները պետք է ստանան այնպիսի կենսաթոշակ, որի չափը հնարավորինս մոտ է որպես դատավոր նրանց վերջին ստացած աշխատավարձի չափին («Դատավորների կարգավիճակի մասին» եվրոպական խարտիա, 6.4-րդ կետ),

- դատավորի կենսաթոշակը պետք է ողջամիտ հարաբերակցության մեջ գտնվի նրա ստացած աշխատավարձի հետ (Դատավորների անկախության, արդյունավետության և պատասխանատվության վերաբերյալ 2010 թվականի նոյեմբերի 17-ի թիվ Rec (2010)12 հանձնարարական, 54-րդ կետ),

- կողմնակի ազդեցությունից զերծ մնալու նպատակով դատավորները պետք է ապահովված լինեն օրենքով սահմանված համարժեք կենսաթոշակով (Եվրոպայի խորհրդի շրջանակներում գործող Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհրդի (ԵԴԽԽ) կողմից 2010 թվականի նոյեմբերի 17-ին հաստատված՝ «Դատավորների հիմնարար սկզբունքների վերաբերյալ» խարտիա, 7-րդ կետ):

Վերոնշյալ իրավական ակտերում կենսաթոշակի չափի վերաբերյալ արտահայտած դիրքորոշումներից (կենսաթոշակի չափը հնարավորինս մոտ պետք է լինի որպես դատավոր նրանց վերջին ստացած աշխատավարձի չափին, կենսաթոշակի չափը պետք է աշխատավարձի հետ գտնվի ողջամիտ հարաբերակցության մեջ) բխում է, որ դատավորի կենսաթոշակի իրավունքի իրացման առանձնահատկությունները սահմանելիս պետությունը, իր ֆինանսական հնարավորություններից, ինքնուրույն որոշում է կենսաթոշակի չափը:

Կենսաթոշակի իրավունքի իրացման երկակի պայմաններ են սահմանված նաև դատախազի, ինչպես նաև քննչական կոմիտեում, հակակոռուպցիոն կոմիտեում (հատուկ քննչական ծառայությունում) և պետական եկամուտների կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցրած անձանց համար. Օրենքի 2-րդ և 5-րդ հոդվածով սահմանված են նշված պաշտոններ զբաղեցրած անձանց կենսաթոշակի իրավունքի իրացման հիմնական պայմանները, իսկ օրենքի 9-րդ հոդվածով՝ ժամանակավոր՝

մինչև 2014 թվականի հուլիսի 1-ը գործող կարգավորումներով նախատեսված պայմանները, որոնք էականորեն տարբերվում են հիմնական պայմաններից:

Բացի նշված խնդիրները, կենսաթոշակի իրավունքի իրացման պայմաններ են սահմանված «Քննչական կոմիտեի մասին» և «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքներով: Առաջին դեպքում քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցրած անձանց կենսաթոշակի իրավունքի կարգավորումները դուրս են մնացել ընդհանուր կարգավորումների ոլորտից և դժվարացնում են միասնական քաղաքականություն վարելը: Երկրորդ դեպքում սահմանված են դրույթներ, որոնք հնարավոր չէ իրականացնել ՀՀ կենսաթոշակային համակարգում:

Նախագծերի փաթեթը մշակվել է առակա իրավական կարգավորումները համակարգված միասնականացնելու նպատակով:

Միաժամանակ, Նախագծերի փաթեթը մշակելիս հաշվի է առնվել Վարչապետ Նիկոլ Փաշինյանի մոտ 2021 թվականի նոյեմբերի 1-ին ժամը 12:00-ին կայացած՝ ՀՀ 2022 թվականի պետական բյուջեով նախատեսված Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ծրագրերի և միջոցառումների մասին խորհրդակցության արձանագրության 1-ին կետի 3-րդ ենթակետի «ա» պարբերության հանձնարարականը, որով հանձնարարվում է վերանայել կենսաթոշակային ապահովության ոլորտը, մասնավորապես, դատավորների, դատախազների, քննիչների կենսաթոշակների հաշվարկման մեխանիզմը դիտարկել մինչ 2014 թվականի հուլիսի 1-ը գործող կարգավորումներով:

Նախագծերի փաթեթը մշակելիս հաշվի է առնվել նաև ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավար Արայիկ Հարությունյանի մոտ 2021 թվականի դեկտեմբերի 23-ին կայացած խորհրդակցության արձանագրության 1-ին կետով տրված հանձնարարականները:

1.2. Առկա խնդրի առաջարկվող լուծումը

Հաշվի առնելով վերը նշվածը՝ նախագծերի փաթեթով առաջարկվում է դատավորի, դատախազի, ինչպես նաև քննչական կոմիտեում, հակակոռուպցիոն կոմիտեում և պետական եկամուտների կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցրած անձանց կենսաթոշակային ապահովության միասնական համակարգված

պայմանները սահմանել «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» օրենքով:

2. Կարգավորման առարկան

«Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծով առաջարկվում է Սահմանադրական դատարանի 18.06.2019թ. ՍԴՈ-1463 որոշման համաձայն՝ դատավորների համար սահմանել կենսաթոշակի՝ բացառապես օրենքով հաշվարկվող չափ՝ անկախ պաշտոնավարման ժամկետներից, ծննդյան տարեթվից, այն փոխկապակցելով զբաղեցրած վերջին պաշտոնից ազատվելու օրվա դրությամբ այդ պաշտոնի համար սահմանված պաշտոնային դրույքաչափի և հավելավճարի հանրագումարին:

Բացի դրանից, նախագծով առաջարկվում է՝

1) պահպանել դատավորի պաշտոն զբաղեցրած անձի՝ Օրենքի 2-րդ հոդվածով սահմանված՝ կենսաթոշակի իրավունք տվող պայմանները,

2) դատախազի, հակակոռուպցիոն կոմիտեում, քննչական կոմիտեում և պետական եկամուտների կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցրած անձի համար, որպես կենսաթոշակի կենսաթոշակի իրավունք տվող պայման, սահմանել դիմումի հիման վրա, ինչպես նաև հաստիքների կրճատման, առողջական վիճակի վատթարացման հիմքով պաշտոնից ազատվելու օրվա դրությամբ առնվազն 20 օրացուցային տարվա մասնագիտական ստաժ ունենալը (գործող կարգավորումներով պաշտոնից ազատվելու օրվա դրությամբ առնվազն 20 օրացուցային տարվա մասնագիտական ստաժ ունենալու պահանջը սահմանված է անցումային դրույթներով՝ 01.07.2017թ. դրությամբ),

3) օրենսդրությամբ մասնագիտական գործունեության համար հավելավճար սահմանված պաշտոններ (դատավոր, դատախազ, ինչպես նաև հակակոռուպցիոն կոմիտեում, քննչական կոմիտեում և պետական եկամուտների կոմիտեում ինքնավար պաշտոն) զբաղեցրած անձանց կենսաթոշակի համար սահմանել վերին շեմ՝ այն պաշտոնային դրույքաչափի 92 տոկոսը, որից հաշվարկվել է կենսաթոշակը, իսկ

կենսաթոշակի չափը, անկախ պաշտոնից ազատվելու հիմքից, ծննդյան տարեթվից հաշվարկել՝

ա. զբաղեցրած վերջին պաշտոնից ազատվելու օրվա դրությամբ այդ պաշտոնի համար «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքով սահմանված պաշտոնային դրույքաչափի ու հավելավճարի հանրագումարի 55 տոկոսի չափով՝ դատավորի դեպքում և 50 տոկոսի չափով՝ սույն կետում նշված մնացած պաշտոնների համար, եթե տվյալ պաշտոն զբաղեցրած անձը կուտակային բաղադրիչի մասնակից չէ կամ կուտակային բաղադրիչի մասնակից է, սակայն նրա համար առկա չէ կուտակային կենսաթոշակի՝ պետական բյուջեի հատկացումներից ձևավորված չափ,

բ. զբաղեցրած վերջին պաշտոնից ազատվելու օրվա դրությամբ այդ պաշտոնի համար «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքով սահմանված պաշտոնային դրույքաչափի ու հավելավճարի հանրագումարի 55 տոկոսի՝ դատավորի դեպքում և նրան վճարվող կուտակային կենսաթոշակի՝ պետական բյուջեի հատկացումներից ձևավորված չափի տարբերության չափով, եթե տվյալ պաշտոն զբաղեցրած անձը կուտակային բաղադրիչի մասնակից է և նրա համար առկա է կուտակային կենսաթոշակի՝ պետական բյուջեի հատկացումներից ձևավորված չափ,

4) սահմանել կենսաթոշակի վերահաշվարկի հնարավորություն՝ կուտակային կենսաթոշակ նշանակելու, նշանակված կուտակային կենսաթոշակի՝ «Կուտակային կենսաթոշակների մասին» օրենքի 9-րդ հոդվածով սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից հատկացված լրացուցիչ միջոցներից ձևավորված չափը փոխվելու (ավելանալու կամ նվազելու) դեպքերում,

5) ԲԴԽ անդամների և Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ գործող միջազգային դատարանի դատավորի պաշտոնում պաշտոնավարած անձի համար սահմանել դատավորի համար սահմանված կենսաթոշակի հաշվարկման կարգ,

6) առնվազն մեկ սահմանադրական ժամկետ գլխավոր դատախազի պաշտոն զբաղեցնելը սահմանել որպես Օրենքով կենսաթոշակ նշանակելու հիմք՝ 65 տարին լրանալու դեպքում,

7) սահմանել, որ Օրենքի N 1 հավելվածով սահմանված պաշտոններում, օտարերկրյա պետությունում գործող դիվանագիտական ծառայության մարմինների ղեկավարի պաշտոնում առնվազն պաշտոնավարած անձը Օրենքով կենսաթոշակի իրավունք ունի 15 տարի պաշտոնավարելու դեպքում (ներկայիս 10 տարվա փոխարեն), հաշվի առնելով այն հանգամանքը, որ Օրենքի՝ խնդրո առարկա դրույթները տարածվում են Հայաստանի Հնարապետությունում 1990 թվականի օգոստոսի 23-ից հետո պաշտոնավարած ժամանակահատվածների վրա և ի սկզբանե 10 տարին սահմանվել էր այն պատճառով, որ 2014թ. օբյեկտիվորեն ավելի երկար ժամկետով պաշտոնավարել հնարավոր չէր: Միաժամանակ հստակեցնել, որ Օրենքի N 1 հավելվածում նշված անձը չունի Օրենքով կենսաթոշակի իրավունք, եթե նա պաշտոնից ազատվել է իր նկատմամբ դատարանի մեղադրական դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելու հիմքով կամ նրա նկատմամբ հարուցված քրեական հետապնդումը դադարեցվել է (քրեական հետապնդումը) չի իրականացվել ոչ արդարացնող հիմքով կամ պաշտոնից ազատվել է կարգապահական պատասխանատվության ենթարկվելու հիմքով.

8) հստակեցնել, որ մեկից ավելի հիմքերով միաժամանակ կենսաթոշակի իրավունք ձեռք բերած անձին կենսաթոշակ նշանակվում է այդ հիմքերից մեկով՝ իր ընտրությամբ.

9) հստակեցնել, որ սահմանված պայմանները բավարարելու դեպքում Օրենքով կենսաթոշակի իրավունք ունեն Հայաստանի Հանրապետության քաղաքացին, Հայաստանի Հանրապետության երկքաղաքացին: Հայաստանի Հանրապետության երկքաղաքացին կենսաթոշակի իրավունք ունի Հայաստանի Հանրապետության բնակչության պետական ռեգիստրում Հայաստանի Հանրապետությունում բնակության վայրի հասցեում հաշվառված լինելու ժամանակահատվածում,

10) հստակեցնել Օրենքի իմաստով մահացած (զոհված) պետական պաշտոն զբաղեցրած անձի ընտանիքի անդամների շրջանակը,

11) հստակեցնել Հայաստանի Հանրապետության այլ օրենքներով պետական կենսաթոշակ ստանալու իրավունք ունեցող անձին Օրենքով կենսաթոշակ նշանակելու ժամկետը և այդ օրվանից հետո վճարված այլ կենսաթոշակի գումարը պահելու կարգը,

12) սահմանել, որ դատախազի և քննչական մարմիններում ինքնավար պաշտոն զբաղեցրած անձանց մասնագիտական ստաժում և Օրենքի N 1 հավելվածով սահմանված պաշտոններում, օտարերկրյա պետությունում գործող դիվանագիտական ծառայության մարմինների ղեկավարի պաշտոնում պաշտոնավարած տարիներում, ինչպես նաև Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասում նշված՝ կենսաթոշակի չափը հաշվարկելու համար ստաժում կադրերի ռեզերվում գտնվելու ժամանակահատվածը չի հաշվառվում,

13) հստակեցնել Օրենքով կենսաթոշակ նշանակելու ժամկետները,

14) Օրենքի անցումային դրույթների՝ 9-րդ հոդվածի 3-11-րդ մասերը ճանաչել ուժը կորցրած,

15) հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Քննչական կոմիտեի մասին» օրենքի 56-րդ հոդվածի 4-րդ մասով կենսաթոշակները նշանակվում են զինվորական ծառայության ստաժով, որում մասնագիտական (քննչական) ստաժը առանձին դեպքերում եղել է 20 տարուց պակաս, սահմանել, որ նշված հիմքով կենսաթոշակի իրավունք ձեռքբերած անձին նշանակված կենսաթոշակը համարվում է Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի.

1) 11-րդ կետով նշանակված կենսաթոշակ (պահանջվում է առնվազն 20 տարվա մասնագիտական ստաժ), եթե նշանակման օրվա դրությամբ անձի մասնագիտական ստաժը կազմել է առնվազն 20 օրացուցային տարի,

2) 14-րդ հոդվածով նշանակված կենսաթոշակ, եթե նշանակման օրվա դրությամբ անձի մասնագիտական ստաժը կազմել է 20 օրացուցային տարուց պակաս,

16) հստակեցնել Օրենքի N 1 հավելվածով սահմանված պաշտոնների ցանկը՝ դրանում ներառելով նաև հակակոռուպցիոն կոմիտեում, քննչական կոմիտեում և պետական եկամուտների կոմիտեի քննչական մարմնում ինքնավար պաշտոնները,

17) 2-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ, 3-րդ, 4-րդ, 13-րդ և 14-րդ կետերում նշված պաշտոններ զբաղեցրած անձի կենսաթոշակի չափը հաշվարկելիս հանել գործող օրենքի՝ «1974 թվականի հունվարի 1-ին և դրանից հետո ծնված՝ պետական պաշտոն զբաղեցրած անձի կենսաթոշակի չափը հաշվարկելիս մասնագիտական ստաժում հաշվառվում են մինչև 2014 թվականի հունվարի 1-ն ընկած ժամանակահատվածները» պահանջը և կենսաթոշակի չափը նվազեցնել անուիտետի կամ ծրագրային վճարների

ձևով վճարվող կուտակային կենսաթոշակի՝ «Կուտակային կենսաթոշակների մասին» օրենքի 9-րդ հոդվածով սահմանված կարգով կատարված՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից հատկացվող լրացուցիչ միջոցներից ձևավորված ամսական չափով:

«Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծով նախատեսվում է նաև դատավորի, դատախազի, ինչպես նաև քննչական կոմիտեում (առնվազն 20 օրացուցային տարվա առկայության դեպքում), հակակոռուպցիոն կոմիտեում և պետական եկամուտների կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցրած անձանց մինչև քննարկվող նախագիծն ընդունվելու դեպքում համապատասխան օրենքն ուժի մեջ մտնելը նշանակված կենսաթոշակները հաշվարկել Օրենքի 5-րդ հոդվածով սահմանված կարգով: Եթե հաշվարկված կենսաթոշակի չափը ցածր է նախկին չափից, ապա կենսաթոշակը վճարվում է նախկին չափով: Ընդ որում, հաշվարկը կատարվում է առանց կենսաթոշակառուի դիմումի կենսաթոշակի գործում պաշտոնից ազատվելու (լիազորությունները դադարելու կամ դադարեցվելու) օրվա դրությամբ պաշտոնային դրույքաչափի և հավելավճարի չափի մասին փաստաթղթի առկայության դեպքում: Կենսաթոշակի գործում պաշտոնից ազատվելու (լիազորությունները դադարելու կամ դադարեցվելու) օրվա դրությամբ պաշտոնային դրույքաչափի և հավելավճարի չափի մասին փաստաթղթի բացակայության դեպքում կենսաթոշակը հաշվարկվում է դիմումը և անհրաժեշտ փաստաթղթերը ոենքն ուժի մեջ մտնելու ամսվան հաջորդող 6 ամսվա ընթացքում ներկայացնելու դեպքում՝ սույն օրենքն ուժի մեջ մտնելու ամսվան հաջորդող ամսվա 1-ից, 6 ամսյա ժամկետից հետո ներկայացնելու դեպքում՝ դիմելու ամսվան հաջորդող ամսվա 1-ից:

Միաժամանակ, առաջարկվում է «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի կարգավորումներին համահունչ փոփոխություններ կատարել հարակից օրենքներում՝ «Սահմանադրական դատարանի մասին» և «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքներում, ինչպես նաև «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» և «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» օրենքներում:

3. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**

Նախագծերի փաթեթն ընդունվելու դեպքում դատավորների կենսաթոշակային ապահովությունը կհամապատասխանեցվի Սահմանադրական դատարանի 18.06.2019թ. ՍԴՈ-1463 որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումներին, ինչպես նաև դատախազների և քննչական մարմիններում ինքնավար պաշտոն զբաղեցրած անձանց համար կսահմանվեն կենսաթոշակային ապահովության միասնական պայմաններ:

4. **Կապը ռազմավարական փաստաթղթերի հետ**

Նախագծերի փաթեթը չի բխում Կառավարության 2021-2026 թթ. ծրագրից, ռազմավարական այլ փաստաթղթերից և նպատակ ունի դատավորների կենսաթոշակային ապահովությունը համապատասխանեցնել Սահմանադրական դատարանի 18.06.2019թ. ՍԴՈ-1463 որոշմանը, դատախազների, հակակոռուպցիոն կոմիտեում, քննչական կոմիտեում և պետական եկամուտների կոմիտեի քննչական մարմնում ինքնավար պաշտոն զբաղեցրած անձանց համար սահմանել կենսաթոշակային ապահովության միասնական պայմաններ: